

Արձանագրություն N 3
«ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01» ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«30» Դեկտեմբեր 2019թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը,

Անդամներ՝ Ջավեն Աղաջանյանը, Էդգար Հովհաննիսյանը և Էդուարդ Սողոմոնյանը.

Քարտուղար՝ Արթուր Բաղայանը:

Գնահատող հանձնաժողովի անդամ Անդրանիկ Տոներյանը բացակայում էր նիստից:

I. Բաց մրցույթի բանակցությունների վերաբերյալ տեղեկատվություն

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի դեկտեմբերի 26-ի ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն մրցույթի մասնակիցներ՝ «Յուլքոմ» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ, ժամը 11:00-ին հրավիրվել էին առաջարկված գների նվազեցման բանակցություններին, որը տեղի էր ունենալու ք. Երևան Մ. Խորենացի 3 հասցեյում՝ ՀՀ պետական եկամտների կոմիտեի գնումների համակարգման բաժնում:

Սույն թվականի դեկտեմբերի 30-ի ժամը 11:00-ին առաջարկված գների իջեցման բանակցությունների էր ներկայացել «Յուլքոմ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս կողմից առաջարկված գների նվազեցում չի կատարվել:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «Յուլքոմ» ՍՊԸ-ին:

բ) հաստատել բաց-մրցույթի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,


գ) անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 4, դեմ՝ 0


Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝



Գ. Գալստյան


գնահատող անդամներ՝




Ա. Տոներյան



Է. Սողոմոնյան




Է. Հովհաննիսյան



Ա. Իսկանդարյան

քարտուղար՝



Ա. Բաղայան